

**ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԵՎ
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԵՆԹԱՃՅՈՒՂԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՎՈՒՈՂՅԱ ՄԱՆԱՅԱՆ

Կարտոֆիլի արտադրության արդյունավետության բարձրացմանը նպաստող կարևոր գործոններ են մասնագիտացումը և համակենտրոնացումը: Ենթաճյուղի տնտեսական արդյունավետությունն անհամեմատ ավելի բարձր է մասնագիտացված տնտեսություններում, որտեղ այդ մշակաբույսին հատկացվում են զգալի ցանքատարածություններ, որը թույլ է տալիս արմատավորել մշակաբույսի աճեցման և բերքահավաքի առաջավոր տեխնոլոգիաներ¹: Բացի դրանից՝ մասնագիտացված տնտեսություններում բարձր է մշակաբույսի բերքատվությունը, ցածր են ինքնարժեքն ու միավոր արտադրանքի ստացման վրա կատարված աշխատանքային ծախսերը, և հետևաբար բարձր է ենթաճյուղի շահութաբերության մակարդակը (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1

ՀՀ ճամբարակի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում կարտոֆիլի արտադրության մասնագիտացման խորացման և համակենտրոնացման բարձրացման արդյունավետությունը (2010 թ.)²

Տնտեսությունների խմբերն ըստ տվյալվեների չափերի, հա-ով	Տնտեսության տնկարկների միջին չափերը, հա-ով	Մասնագիտացման մակարդակը, %-ով	Տեսակարար կշիռը տնտեսությունների թվաքանակում, %-ով	Տեսակարար կշիռը տնկարկների արածքում, %-ով	Տեսակարար կշիռը համախառն բերքի մեջ, %-ով	Բերքատվության ինդեքսը	19-ի ինքնարժեքի ինդեքսը	19-ի հաշվով աշխատածախսերի ինդեքսը	Շահութաբերության մակարդակը, %-ով
Մինչև 0.5	0.19	1.5	53.6	10.0	9.2	0.68	1.27	1.69	9.36
0.5-1.0	0.75	2.6	21.8	11.3	10.2	0.91	1.12	1.19	9.2
1.0-1.5	1.1	3.1	7.3	10.4	9.8	0.94	1.06	1.11	19.8
1.5-2.0	1.8	5.1	5.5	22.1	22.0	1.00	1.06	1.02	17.9
2.0-2.5	2.5	6.9	1.8	33.0	38.4	1.11	1.02	1.02	32.0
2.5-ավելի	2.9	13.0	10.0	10.5	11.0	0.90	0.91	0.84	18.4

¹ Տե՛ս **Ս. Ավետիսյան**, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, 238 էջ, **Ա. Սանասարյան**, Կարտոֆիլի արտադրության զարգացումը որպես ՀՀ լեռնային տարածաշրջանների տնտեսության կայունացման բաղադրիչ, «Ագրոգիտություն», 2007, № 9-10, էջ 398-402, **Тульев В.** Картофелопродуктовый агропродовольственный подкомплекс. М., 1986: !

² Աղյուսակը կազմել ենք Գեղարքունիքի մարզային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, ճամբարակի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում կարտոֆիլի տնկարկների չափերի աճին զուգահեռ տեղի է ունենում նաև կարտոֆիլագործության տնտեսական արդյունավետության ցուցանիշների աճ: Ամենաբարձր բերքատվություն, աշխատանքի արտադրողականություն և շահութաբերության մակարդակ ունեն կարտոֆիլի համակենտրոնացման առավել բարձր աստիճան ունեցող տնտեսությունները, այսինքն՝ տնտեսության հաշվով 2.0-2.5 հա-ից ավելի: Կարտոֆիլագործության տեսակարար կշռի ավելացման դեպքում համանման օրինաչափություն դիտվում է նաև գյուղացիական տնտեսության ապրանքային արտադրանքի ինքնարժեքում:

Ագրարային հատվածի բոլոր ենթաճյուղերի արտադրական ուղղություններին բնորոշ գծերի հետ մեկտեղ՝ կարտոֆիլագործության մեջ մասնագիտացումն ունի զարգացման ուրույն առանձնահատկություններ: Այսպես, ագրոտեխնիկայի ժամանակակից շուկայական պայմանների դեպքում չի կարող խնդիր դրվել կարտոֆիլի հիմնական մասը արտադրել նեղմասնագիտացված տնտեսությունների հիմքի վրա: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առավել կարևոր են.

ա) մշակաբույսի կենսաբանական առանձնահատկությունները պահանջում են խստիվ պահպանել ագրոտեխնիկայի պահանջները, նույնիսկ այդ մշակաբույսի ամենահազեցված մասնագիտացված ցանքաշրջանառությունները կարող են ընդգրկել ցանքատարածությունների 40% -ից ոչ ավելին: Դա օբյեկտիվորեն սահմանափակում է արտադրության համակենտրոնացման հնարավորությունները, իսկ դրա հետևանքով նաև առանձին տնտեսություններում ենթաճյուղի մասնագիտացման խորացումը,

բ) կարտոֆիլը դասվում է այն մշակաբույսերի շարքին, որոնց բերքի զգալի մասը չի կարող օգտագործվել որպես ապրանքային արտադրանք,

գ) մասնագիտացման խորացման հնարավորությունները սահմանափակում են ենթաճյուղի համակենտրոնացման տնտեսապես նպատակահարմար սահմանները:

Մասնագիտացված գյուղացիական տնտեսություններում կարտոֆիլի արտադրության վերլուծությունը վկայում է այն մասին, որ ենթաճյուղի զարգացումը տնտեսապես արդյունավետ է կաթնամսատու տավարաբուծական, այգեգործական, բանջարաբուծական և այլ արտադրական ուղղություն ունեցող տնտեսություններում (տե՛ս աղ. 2):

Ընդ որում՝ բանջարաբուծական արտադրական ուղղություն ունեցող տնտեսությունները աչքի են ընկնում ողողվող մարգագետնային գորշ (կուլտուր-ոռոգելի) և լեռնային շագանակագույն հողերի լավագույն բերրիությամբ, ինչպես նաև երկրագործություն վարելու մշակվածության բարձր մակարդակով (օրինակ՝ Արարատյան դաշտը և նրան հարող նախալեռնային գոտին): Այնտեղ հիմնականում աճեցնում են վաղահաս կարտոֆիլ, որը հաջողությամբ զուգակցվում է ջերմասեր և շուկայական մեծ պահանջարկ ունեցող բաց ու փակ գրունտի բանջարանոցային մշակաբույսերի, պտուղների ու խաղողի հետ:

Աղյուսակ 2

**Արմավիրի մարզի էջմիածնի տարածաշրջանի տարբեր արտադրական ուղ-
ղությունների գյուղացիական տնտեսություններում վաղահաս կարտոֆիլի
արտադրության արդյունավետությունը (միջինը 2006-2010 թթ.-ի ընթացքում)³**

Ցուցանիշներ	Արտադրական ուղղությունները			
	Բանջարա- բուծական	Այգեգործու- կան	Կաթնատու տավարա- բուծական	Այլ
Ընտրովի գյուղացիական տնտեսությունների քանակը	36	16	19	5
Գյուղատնտեսական հողատեսքերի մակերեսը, հա-ով	31.6	14.6	20.2	3.3
որից վարելահողերը	20.6	9.06	12.8	1.81
1հա վարելահողի հաշվով բուսաբուծության հիմնական ֆոնդե- րը, հազ. դրամով	276.8	408.1	157.2	5105.3
Տնտեսության ապրանքային արտադրանքի մեջ կարտոֆիլի տե- սակարար կշիռը, %-ով	8.8	2.7	8.4	1.1
Կարտոֆիլի տնկարկների միջին չափերը, հա-ով	2.12	0.47	0.96	0.22
Բերքատվությունը, ց/հա-ով	342	340	341	325
1 ց-ի ինքնադժեքը, հազ. դրամով	5100	5820	5900	6300
1 ց-ի աշխատանքային ծախսերը, մարդ-ժամ	8.17	9.71	8.86	9.70
1000 դրամ ծախսերի հաշվով ստացված գումարը, դրամով	1000.0	720.0	870.0	840

Ուրիշ ենթաճյուղերի հետ կարտոֆիլագործության փոխադարձ կա-
պերի կազմակերպչատնտեսական համեմատությունը ցույց է տալիս, որ
տնտեսապես առավել նպատակահարմար է կաթնատու տավարաբուծու-
թյան հետ կարտոֆիլի արտադրության զուգակցումը, քանի որ՝

1) հողերի բերրիության բարձրացման ժամանակակից եղանակների
դեպքում տնտեսապես նպատակահարմար չէ կարտոֆիլագործությունն
առանձնացնել օրգանական պարարտանյութ մատակարարող տավարա-
բուծությունից, քանի որ առանց դրա դժվար է ապահովել մշակաբույսի
բարձր բերքատվություն և ստանալ էկոլոգիապես մաքուր արտադրանք,

2) այդ երկու ենթաճյուղերի համակողմանի զարգացման տարածա-
շրջանները համընկնում են, քանի որ ձգտում են դեպի արտադրանքի
սպառման շուկաներ,

3) տվյալ զուգակցման դեպքում ի հայտ են գալիս կարտոֆիլի՝ ըստ
տարածաշրջանների արդյունավետ տեղաբաշխման հնարավորություն-
ներ, քանի որ նախկին կերային մշակաբույսերի ցանքատարածությունե-
րի մեծ մասը լավագույն նախորդ է կարտոֆիլի համար: Բացի դրանից՝
ապրանքային կարտոֆիլագործության թափոններով կերակրում են խոշոր
եղջերավոր անասուններին. կարտոֆիլի վերամշակման ժամանակ 1 տ

³ Աղյուսակը կազմել ենք Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսական բաժ-
նի տվյալների հիման վրա:

կարտոֆիլից ստանում են ավելի քան 1,5 տ տակուցք անասնաբուծության համար:

Այսպիսով, կարտոֆիլագործական տնտեսություններում փոխկապակցված երկու ենթաճյուղերի (կարտոֆիլագործություն և կաթնատու տավարաբուծություն) զուգակցումը յուրաքանչյուրի առավելագույն համակենտրոնացման դեպքում ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ենթաճյուղի մասնագիտացման խորացման օբյեկտիվ օրինաչափություն է, ինչպես նաև մասնագիտացման ու համակենտրոնացման նոր մակարդակ տեղափոխելու նախադրյալ:

Աշխատուժի և արտադրության միջոցների նվազագույն ծախսերի դեպքում տնտեսությունում վերոհիշյալ ենթաճյուղերի զուգակցման տնտեսական արդյունավետությունը միավոր հողատարածքի հաշվով հասնում է առավելագույնի: Սակայն հաճախ անհրաժեշտ է նաև արտադրել ավելի պակաս շահութաբեր, բայց բնակչությանն անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքներ, որոնցից է, օրինակ, կարտոֆիլը: Տնտեսությունում կարտոֆիլագործության մշակման մակարդակը հաճախ որոշվում է ոչ այնքան ենթաճյուղերի ավելի արդյունավետ զուգակցմամբ, որքան սոցիալ-տնտեսական գործոններով:

Որպես հեռաշարացան առանձնահատուկ մշակաբույս և որպես սպառողական արժեք՝ առաջին հերթին անհրաժեշտ է ճշտել կարտոֆիլի փոխադրելիության հնարավորությունները: Կարտոֆիլը պահպանման մեծ ծավալներ պահանջող մշակաբույս է, ուստի նրա ցանքատարածությունները անհրաժեշտ է կենտրոնացնել մերձքաղաքային և հունքային գոտիներում, որը թույլ կտա կրճատել տրանսպորտային ծախսերը և աշխատանքային լարված շրջանում ենթաճյուղն ապահովել աշխատուժով:

Մերձքաղաքային գոտիներում կարտոֆիլ աճեցնելը քաղաքների և արդյունաբերական կենտրոնների բնակիչներին ապահովում է թարմ կարտոֆիլով, ուստի այստեղ բարձր են վաղահաս կարտոֆիլի ցանքատարածությունների տեսակարար կշիռը և ապրանքայնության մակարդակը:

Արդյունավետ տեղաբաշխման դեպքում փաստորեն լուծվում է կարտոֆիլի արտադրության ներճյուղային մասնագիտացման հարցը՝ վաղահասը և միջին վաղահասը՝ ցածրադիր ու նախալեռնային գոտիների մերձքաղաքային տնտեսություններում, իսկ ուշահասը՝ լեռնային գոտու ավելի հեռավոր տարածաշրջաններում, որտեղ մշակաբույսի աճեցման համար առկա են առավել բարենպաստ ագրոկլիմայական, տնտեսական և տրանսպորտային պայմաններ:

Մերձքաղաքային գոտու կարտոֆիլագործության մասնագիտացման խորացման մեթոդիկայի ելակետային դրույթը կողմնորոշվում է արտադրական տիպերի կամ տնտեսությունների տիպային մասնագիտացված խմբերի առանձնացման վրա: ՀՀ-ում այժմ ստեղծվում են մերձքաղաքային բանջարաբուծական-տավարաբուծական-կարտոֆիլագործական և խաղողագործական-տավարաբուծական-կարտոֆիլագործական արտադրական տիպերի գյուղացիական տնտեսություններ: Այդ արտադրական տիպերում, որպես կանոն, կաթի արտադրությունը զուգակցվում է բանջարեղենի, կարտոֆիլի և խաղողի ու պտուղների արտադրությամբ:

ՀՀ-ի մերձքաղաքային գոտիներում վաղահաս կարտոֆիլագործության տնտեսական արդյունավետության վերլուծության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Երևանի մարզը և նրան հարող մասնագիտացված գյուղացիական տնտեսությունների խմբերը:

Սակայն Երևանին հարող մերձքաղաքային գոտու տնտեսություններում ցածր փոխադրելի մթերքների արտադրության, այդ թվում՝ նաև կարտոֆիլի արդյունավետության խնդիրները, դեռևս լուծված չեն: Մերձքաղաքային կարտոֆիլագործական տնտեսությունների մասնագիտացումը անընդհատ կատարելագործվելու և արագ փոփոխվող շուկայական պայմաններին համապատասխանող նոր մոտեցումներ գտնելու ուղիներ է թելադրում:

Մերձքաղաքային գոտու գյուղացիական շատ տնտեսությունների մասնագիտացման ցածր մակարդակը գյուղատնտեսական մթերքների արտադրության ոչ բարձր արդյունավետության պատճառներից մեկն է:

Շուկայում կամ այլ ուղիներով գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված գումարի տեսակարար կշիռը Երևանին հարող մերձքաղաքային գոտու մասնագիտացված գյուղացիական տնտեսություններում տրված է աղյուսակ 3-ում՝ ըստ 2006-2010 թթ. միջին տարեկան ցուցանիշների տվյալների:

Աղյուսակ 3

Երևանի մերձքաղաքային գոտու էջմիածնի տարածաշրջանի ընտրովի գյուղական համայնքների գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման մակարդակը

Տնտեսությունների արտադրական ուղղությունները	Խմբում գյուղացիական տնտեսությունների քանակը	Ստացված դրամական գումարի կառուցվածքը, %						
		խառով	պտուրներ	բանջատեղեն	կարտոֆիլ	կլա	ուսվարի միս	թռչնի միս
Բանջարաբուծական – տավարաբուծական – կարտոֆիլագործական	34	3.6	2.9	38.8	15.8	26.2	7.4	-
Խաղողագործական – տավարաբուծական – կարտոֆիլագործական	48	23.4	5.9	7.4	13.3	41.6	2.9	0.3

Ինչպես երևում է աղյուսակից, մերձքաղաքային գոտու գյուղացիական տնտեսությունների մեծ մասը կարևորում է շատ ենթաճյուղերի զարգացումը: 2006-2010 թթ. 34 ընտրովի գյուղացիական տնտեսություն ունեցող 6 ապրանքային ենթաճյուղ, իսկ 48 տնտեսություն՝ համապատասխանաբար 7 ենթաճյուղ: Պետք է նշել, որ տարածաշրջանի միայն երեք գյուղական համայնքներում է բարձր մասնագիտացման մակարդակը (մասնավորապես՝ Գայի՝ 75.5%, Տարոնիկի՝ 58.7% և Բաղրամյանի՝ 51.5%): Այդ գյուղական համայնքներում արտադրության արդյունավետության հասնում են հիմնականում բաց ու փակ գրունտի բանջարեղենի և մասամբ էլ

խաղողի ու պտուղների իրացման, այլ ոչ թե կաթի ու կարտոֆիլի վաճառքի հաշվին:

Երևանի մերձքաղաքային գոտու գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների, հատկապես կաթի արտադրության ցածր արդյունավետության երկրորդ պատճառը համարվում է կաթնատու տավարաբուծության կերային թույլ բազան, ինչպես նաև կարտոֆիլի արտադրության և իրացման ոչ արդյունավետ համակարգը: Ուստի պետք է նշել, որ կարտոֆիլի համախառն արտադրանքի զգալի զանգվածն օգտագործվում է ներտնտեսական կարիքների համար. ոչ թե որպես մասնագիտացված ենթաճյուղի արտադրանք իրացնում են շուկայում, այլ դրանով կերակրում են ընտանի կենդանիներին: Այդ մասին վկայում են աղյուսակ 4-ում բերված 2009-2010 թթ. միջին տարեկան ցուցանիշները:

Աղյուսակ 4

Վաղահաս կարտոֆիլի ապրանքայնության մակարդակը Էջմիածնի տարածաշրջանի ընտրովի գյուղացիական տնտեսությունների խմբերում⁴

Գյուղացիական տնտեսությունների խմբերը	Խմբերի ցուցանիշներն ըստ կարտոֆիլի ընթացատարածությունների չափերի, հա	Խմբում գյուղացիական տնտեսությունների քանակը	Քերթատվություն, ց/հա	Դամախառն բերքը, ց	Երկայուն և այլ ուղիներով վաճառքը	Գյուղատնտեսական կենդանիներին կերակրածը, ց	
						կենդանիների բոլոր տեսակներին	այդ թվում՝ խոշոր եղջերավոր անասունները
I	0.5-ից մինչև 0.7	22	90.0	1089.0	358.3	442.1	346.6
II	0.3-ից մինչև 0.49	27	89.6	995.6	346.5	383.3	255.3
III	0.1-ից մինչև 0.29	23	64.0	287.0	90.7	190.6	156.1

Այս աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարտոֆիլի համախառն արտադրանքի ավելի քան 40 %-ն օգտագործվում է գյուղատնտեսական կենդանիներին կերակրելու համար: Ընդ որում՝ դրա համարյա 75%-ը ծախսվում է խոշոր եղջերավոր անասուններին կերակրելու համար: Կերային նպատակներով ավելի շատ կարտոֆիլ է ծախսվում, քան իրացվում է, այդ պատճառով վաղահաս կարտոֆիլի ապրանքայնությունը այնքան էլ բարձր չէ: 2009-2010 թթ. ընթացքում առաջին խմբին պատկանող գյուղացիական տնտեսությունները շուկայում կամ այլ ուղիներով իրացրել են 358.3 ց կարտոֆիլ, իսկ 442.1 ց կամ համախառն արտադրանքից 40.6 %-ն օգտագործվել է կենդանիներին կերակրելու համար:

2006-2010 թթ. ընթացքում վերոհիշյալ գյուղացիական տնտեսությունների խմբերում կենդանիների կերակրման համար օգտագործվող կարտոֆիլի 1ց կերային միավորի ինքնարժեքը 3100-ից մինչև 4200 դրամի սահմաններում է: Դա մի քանի անգամ բարձր է սիլոսային մշակաբույսերից, կերային հացահատիկներից և բազմամյա խոտաբույսերից ստացվող 1ց կերային միավորի ինքնարժեքից: Էջմիածնի տարածաշրջանի Տա-

⁴ Աղյուսակը կազմել ենք Էջմիածնի տարածաշրջանի ընտրովի 600 գյուղացիական տնտեսությունների տվյալների հիման վրա:

րոնիկ գյուղական համայնքում մշակաբույսերի՝ որպես կերի օգտագործման արդյունավետությունը ցույց է տրված աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Կերի համար օգտագործվող մշակաբույսերի տնտեսական արդյունավետությունը էջմիածնի տարածաշրջանի Տարոնիկ գյուղական համայնքում⁵

Ցուցանիշները	Չափման միավորը	Տարիներ				
		2006	2007	2008	2009	2010
Ամբողջ օգտագործված կերերը	Կերային միավորներ	524.0	457.2	504.3	528.1	530.2
Այդ թվում՝ կարտոֆիլ	„	63.0	64.0	65.0	68.0	71.0
1գ կարտոֆիլի կերային միավորի ինքնարժեքը	Դրամներով	5600	5750	5900	6200	6400
1գ հացահատիկի կերային միավորի ինքնարժեքը	„	3014	3360	3870	4180	4450
1գ բազմամյա խոտաբույսերի կերային միավորի ինքնարժեքը	„	960	985	1150	1370	1590

Ինչպես արդեն նշվեց վերևում, չի կարելի անտեսել գյուղատնտեսական կենդանիներին կարտոֆիլով կերակրելու անհրաժեշտությունը, քանի որ այն կարող է և պետք է ընդգրկվի բարձր կալորիական և կաթնատվության բարձրացմանը նպաստող համապատասխան հյութալի կերերի համամասնության մեջ: Կերերի օրաբաժնում կարտոֆիլի ընդգրկման հիմնական չափանիշը պետք է համարվի նրա արտադրության արդյունավետության ցուցանիշը և գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման մակարդակը:

ՀՀ լեռնային գոտու մի շարք կարտոֆիլագործական տարածաշրջաններում (հատկապես հեռավոր) կարտոֆիլի աճեցումը կերային նպատակների համար տնտեսապես շահավետ է, և նրա նշանակությունը՝ որպես արժեքավոր կերային մշակաբույս, պետք է պահպանվի նաև հեռանկարում: Այդ տեսակետից օրինակ կարող են ծառայել Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի Բենիամին, Հացիկ և Հովունի գյուղական համայնքները:

2006-2010 թթ. ընթացքում գյուղական այդ համայնքներում կարտոֆիլի համախառն բերքի 25%-ից ավելին օգտագործվել է որպես անասնակեր: Ընդ որում, խոզերի օրաբաժնում նրա տեսակարար կշիռը եղել է 30-40%, իսկ խոշոր եղջերավոր անասուններից՝ 25%: Եթե հաշվի առնենք, որ այդ գյուղական համայնքներում խոշոր եղջերավոր անասունի 1գ քա-

⁵ Աղյուսակը կազմել ենք էջմիածնի տարածաշրջանի Տարոնիկ գյուղական համայնքի տվյալների վերլուծության հիման վրա:

շաճի ինքնարժեքը 2010 թ. կազմել է 36.3 հազ. դրամ, ապա տվյալ արտադրանքի իրացման գների դեպքում գյուղացիական տնտեսությունները 1g կենդանի քաշի իրացումից ստանում են 13.7 հազ. դրամից ոչ պակաս շահույթ, իսկ շահութաբերության մակարդակը 27.4% է: Նույն պատկերն է նկատվում նաև կաթի իրացման դեպքում: Մերձքաղաքային գոտու գյուղացիական տնտեսությունների կերային հաշվեկշռում կարտոֆիլի տեսակարար կշիռը պետք է հիմնականում պայմանավորված լինի այդ ենթաճյուղից ստացվող թափոններով և դրանց օգտահանմամբ:

Ցածր փոխադրելի կարտոֆիլի արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար մերձքաղաքային գոտու գյուղացիական տնտեսություններում մասնագիտացման խորացման անհրաժեշտություն է առաջանում: Այստեղ, մեր կարծիքով, խոսքը ոչ միայն նեղ մասնագիտացված տնտեսությունների ստեղծման, այլև դրանց մասնագիտացման խորացման հաշվառմամբ Երևանի մերձքաղաքային գոտու սահմանների ընդլայնման մասին է: Տնտեսապես նպատակահարմար է Երևանին հարող մարզերի գյուղացիական տնտեսություններում հիմնականում արտադրել կարտոֆիլի վաղահաս սորտեր, իսկ ուշահաս սորտերի զբաղեցրած ցանքատարածությունների մի մասը տեղափոխել կերային մշակաբույսերի տակ: Գեղարքունիքի, Շիրակի, Լոռվա և Տավուշի մարզերում բարենպաստ ազդակլիմայական, տնտեսական և տրանսպորտային պայմանները հնարավորություն են տալիս մասնագիտացման խորացման շնորհիվ ավելացնել միջահաս և ուշահաս ապրանքային կարտոֆիլի արտադրությունը, քանի որ այդ մարզերում տեղաբաշխված կարտոֆիլագործական գյուղական համայնքներն ունեն տրանսպորտային լավ կապեր հանրապետության խոշոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների հետ:

Կարտոֆիլի արտադրության տնտեսական արդյունավետությունը շատ անգամ որոշվում է իրացման գներով, որոնք պետք է ոչ միայն ամբողջությամբ փոխհատուցեն արտադրության ծախսերը, այլև պայմաններ ստեղծեն արտադրանքի ընդլայնված վերարտադրության համար: Կարտոֆիլագործության մեջ կարևոր է, որ աճեցվող մշակաբույսի ամբողջ տեսականու համար իրացման գները ապահովեն շահութաբեր արտադրություն: Վաղահաս կարտոֆիլի նկատմամբ սահմանվում են ավելի բարձր գներ, քան միջահաս և ուշահաս սորտերի: Իրացման գների և ապրանքայնության մակարդակի բարձրացման հաշվին վաղահաս կարտոֆիլի շահութաբերության մակարդակը, որպես կանոն, բարձր է: Կարտոֆիլի շահութաբերության մակարդակի վրա մեծ ազդեցություն է ունենում արտադրանքի որակը: Արտադրանքը բարձր կենսաքիմիական որակով (կարտոֆիլի մեջ օսլայի և այլ տարրերի պարունակությունը) իրացման և արդյունաբերական վերամշակման ընդունման դեպքում ավելի բարձր է վճարվում, քան նախատեսված բազային մակարդակում: Ոչ չափանշված արտադրանքը 45-50 %-ով ավելի ցածր է վճարվում, քան չափանշվածքայինը:

Շուկայական տնտեսավարման պայմաններում կարտոֆիլագործության մեջ, անկախ արտադրական ուղղությունից, արդյունավետության

բարձրացման գործում կարևոր դեր են խաղում մշակաբույսի ցանքատարածությունների չափերը (տե՛ս աղ. 6):

Աղյուսակ 6

Կարտոֆիլի տնկարկների համակենտրոնացման արդյունավետությունը Ապարանի տարածաշրջանի ընտրովի գյուղացիական տնտեսություններում (միջինը 2006-2010 թթ. ընթացքում)⁶

Ցուցանիշները	Կարտոֆիլի տնկարկների մակերեսը, հա-ով					
	Մինչև 0.3	0.31-0.5	0.51-1.0	1.1-1.50	1.51 - 2.0	2.0 հա-ից ավելի
Հետազոտվող տնտեսությունների քանակը	35	43	70	36	14	3
Կարտոֆիլի ցանքատարածության միջին չափը, հա-ով	0.19	0.38	0.75	1.15	1.80	2.30
1ց կարտոֆիլի արտադրական ծախսերը, դրամով	8400	8200	8200	8100	7800	7550
Բերքատվությունը, ց/հա-ով	120	140	160	175	190	210
1ց կարտոֆիլի ինքնարժեքը, դրամով	7700	7400	7250	7000	6850	6500
1ց կարտոֆիլի աշխատանքային ծախսերը, մարդ-ժ	5.5	3.3	3.1	2.9	3.2	2.7
1ց կարտոֆիլի իրացման գինը, դրամով	9200	9400	9750	9550	9600	9650
Շահույթը, հազ. դրամով						
ա. 1ց-ի հաշվով	1.50	2.00	2.50	2.55	2.75	3.15
բ. 1հա-ի հաշվով	180.0	280.0	400.0	446.2	522.5	661.5
Շահութաբերության մակարդակը, %-ով	19.5	27.0	34.5	36.4	40.1	48.5

Կարտոֆիլագործության մեջ հստակ ուրվագծվում է փոքրերի նկատմամբ խոշոր արտադրության առավելության օրինաչափությունը⁷: Կարտոֆիլի արտադրության ավելացման հետ մեկտեղ ստեղծվում են օբյեկտիվ պայմաններ՝ տեխնիկայի լայնածավալ և արտադրողական օգտագործմամբ կիրառելու առավել առաջավոր տեխնոլոգիաներ: Ընդ որում, միավոր արտադրանքի հաշվով աշխատանքային ծախսերի կրճատումը տեղի է ունենում բավականաչափ արագ, քան ինքնարժեքինը: Դա հնարավոր է միայն մեքենայացման մակարդակի բարձրացման դեպքում:

Ըստ միագումար ցուցանիշների՝ որպես կանոն լավագույն արդյունքներ ունեն 2.0 հա և ավելի կարտոֆիլի ցանքատարածություններով տնտեսությունները: Մասնագիտացված տնտեսություններում կարտոֆիլով հագեցվածությունը կարող է կազմել վարելահողերի մակերեսների 25%-ը և ավելին, իսկ մասնագիտացված ցանքաշրջանառության մեջ՝ մինչև 50%-ը: Դա թույլ է տալիս ապահովել կարտոֆիլի բավականաչափ բարձր համակենտրոնացում նույնիսկ ոչ մեծ գյուղացիական տնտեսություններում: Ագրոտեխնիկայի, սերմնաբուծության և մշակաբույսերի պաշտպանության բարձր մակարդակների դեպքում ցանքատարածությունների կառուցվածքում կարտոֆիլի տեսակարար կշիռը, ինչպես վկա-

⁶ Աղյուսակը կազմել ենք Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսական բաժնի տվյալների հիման վրա:
Տե՛ս **Վ. Մանասյան**, ՀՀ խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցումը գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման պայմաններում, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Եր., 2009, էջ 159-168:

յում է ենթաճյուղի առավել զարգացած տարածաշրջանների փորձը, կարող է նաև անհամեմատ ավելի բարձր լինել:

Կարևոր է որոշել արտադրության համակենտրոնացման ագրոարտադրական մակարդակը՝ նկատի ունենալով ենթաճյուղի օպտիմալ չափերը և առկա տեխնիկական միջոցների բարձր արդյունքն ու ամբողջական օգտագործումը, քանի որ կարտոֆիլի արտադրության դեպքում հատկապես կարևորվում է ձեռքի աշխատանքը մեքենայականով փոխարինելու հարցը:

Կարտոֆիլագործությունը աչքի է ընկնում բարձր աշխատատարությամբ, աճեցման տեխնոլոգիայի բարդությամբ, ագրոտեխնիկական միջոցառումների որակի ու ժամանակի և աշխատուժի օգտագործման մեջ զգալի սեզոնային տատանումների նկատմամբ բարձր զգայնությամբ. տնկման ծախսերը կազմում են 7%, խնամքինը՝ 16%, բերքահավաքինը՝ 52%: Ինչպես տեխնիկական միջոցների չափից ավելի մեծ քանակությունը, այնպես էլ պակասը հանգեցնում են նրանց օգտագործման տնտեսական արդյունավետության կրճատմանը: Մի դեպքում ոչ ամբողջությամբ են օգտագործվում տեխնիկայի ռեսուրսները, և միավոր ցանքատարածության հաշվով աճում են ծախսերը, մյուս դեպքում տեխնոլոգիական գործողությունների կատարման ագրոտեխնիկական ժամկետների խախտումը նվազեցնում է բերքատվությունը, հետևաբար պակասում են նաև արտադրության արդյունավետության մյուս բոլոր ցուցանիշները, քանի որ կարտոֆիլի արտադրության դեպքում գոյություն ունի ուղիղ համահարաբերակցություն բերքատվության մակարդակի ու աշխատանքային ծախսերի և միջոցների շահութաբերության մակարդակների միջև:

Միջտնտեսական մասնագիտացման և համակենտրոնացման հետ մեկտեղ կարևոր նշանակություն ունեն նաև ենթաճյուղի ներտնտեսական մասնագիտացումը և համակենտրոնացումը, որոնք էական ազդեցություն են ունենում ներտնտեսական միավորների ամրապնդման վրա, ինչպես նաև ըստ աշխատանքների և արտադրվող արտադրանքի տեսականու՝ նպաստում են աշխատանքի մասնագիտացմանը:

Կարտոֆիլի արտադրության ներտնտեսական մասնագիտացումը թույլ է տալիս համակենտրոնացնել արտադրությունը, մեծ չափով օգտագործել խոշոր արտադրության առավելությունները, օգտագործել հոսընթաց տեխնոլոգիական գործընթացները և միավոր արտադրանքի արտադրության հաշվով կրճատել աշխատանքի ու նյութական միջոցների ծախսերը:

Ներտնտեսական մասնագիտացման և համակենտրոնացման բարձր արդյունավետությունը հաստատվում է Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի կարտոֆիլագործական տնտեսությունների աշխատանքային փորձով (տե՛ս աղ. 7)⁸:

⁸ Աղյուսակը կազմել ենք Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության բաժնի տվյալների հիման վրա:

Կարտոֆիլագործության ներտնտեսական մասնագիտացման խորացման և համակենտրոնացման արդյունավետությունը Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում (2010 թ.)

Ցուցանիշները	Գյուղացիական տնտեսությունների չափերը, հա-ով					
	Մինչև 0.3	0.31-0.5	0.51-1.0	1.1-1.50	1.51 - 3.0	3.0-ից ավելի
Քետագոտվող տնտեսությունների քանակը	43	85	36	14	9	8
Կարտոֆիլ մշակող տնտեսությունների քանակը	37	81	34	10	8	5
Տնտեսությունների միջին չափերը	0.24	0.42	0.82	1.18	1.86	3.25
Քերքատվությունը, ց/հա	231.0	217.5	221.0	233.0	235.6	239.0
1ց կարտոֆիլի ինքնարժեքը, հազ. դրամով	7.7	8.0	8.1	8.1	8.4	8.3
1ց կարտոֆիլի աշխատանքային ծախսերը, մարդ-ժ	4.96	4.28	3.31	2.90	2.30	2.33
Քերքահավաքի տարածքը կոմբայնով, %	13.4	17.7	37.0	48.0	61.0	68.0
Պահեստների միջին չափերը, տ	1.95	2.25	4.01	4.68	7.42	7.73

Աղյուսակից հստակ երևում է, որ կարտոֆիլի արտադրության կազմակերպման կատարելագործումը տալիս է լավագույն արդյունքներ: Օրինակ՝ տարածաշրջանի Լճաշեն համայնքում մինչև 2005 թ. կարտոֆիլի ամբողջ ցանքատարածությունը (150 հա) մոտավորապես հավասարաչափ բաշխվել էր գյուղական ծխերի վրա: Սկսած 2005 թ.՝ ձեռնամուխ եղան ներտնտեսական մասնագիտացման խորացման և կարտոֆիլի տնկարկների համակենտրոնացմանը այն հողերի վրա, որոնք առավել պիտանի էին մշակաբույսը մեքենայացված աճեցնելու և քերքահավաքի համար: 2007 թ. կարտոֆիլի ցանքատարածությունների մի զալի մասը (55% -ից ավելին) բաշխվեց 3,0 հա և ավելի հողատարածքներ ունեցող գյուղացիական տնտեսություններում, իսկ 2009-2010 թվականներին՝ 65% -ից ավելի:

Ամբողջ պարենային կարտոֆիլը (Սևանի տարածաշրջանում կարտոֆիլի արտադրությունը 75-80% պարենային ուղղվածություն ունի) կենտրոնացրել են առավելապես թեթև կավային և կավավազային մեխանիկական կազմ ունեցող ոռոգվող հողերի վրա: Սևանի տարածաշրջանում ներտնտեսական մասնագիտացման, համակենտրոնացման և առաջավոր տեխնոլոգիաների արմատավորման շնորհիվ կարտոֆիլի քերքատվությունը հասել է 229.5 ց/հա, 1ց կարտոֆիլի աշխատանքային ծախսերը փոքր տնտեսությունների 4.96 մարդ-ժամից կրճատվելով 3,0 հա և ավելի հեկտար հողատարածքներ ունեցող գյուղացիական տնտեսություններում դարձել է մինչև 2.33 մարդ-ժամ, 1ց արտադրանքի ինքնարժեքը՝ համապատասխանաբար՝ 7700 և 8400 դրամ, իսկ շահութաբերության մակարդակը 4,7-ից բարձրացել է մինչև 29,6%:

Ապրանքայնության բարձր մակարդակ ունեն Վարսեր և Գագարին համայնքները, որոնց կարտոֆիլի համախառն արտադրանքի 75%-ից ավելին պարենային նշանակություն ունի և կողմնորոշվում է դեպի Երևանի իրացման շուկաներ:

Կարտոֆիլի արտադրության լավագույն համակենտրոնացումը և մասնագիտացման խորացումը ստեղծում են մի շարք առավելություններ,

որոնք էլ որոշում են խոշոր մասնագիտացված տնտեսությունների բարձր տնտեսական արդյունավետությունը:

Այդպիսի առավելություններից են նյութատեխնիկական ռեսուրսների համակենտրոնացման հնարավորությունը և նրանց առավել արդյունավետ ու տնտեսավար օգտագործումը: Աշխատանքային և ուրիշ ռեսուրսների սահմանափակ քանակությունը պահանջում է հաճախակի կիրառել բարձր արտադրողական մեքենաներ և սարքավորումներ: Այդ դեպքում պետք է ապահովվել դրանց բարձր ծանրաբեռնվածությունը, տեխնիկական լավ սպասարկումը, պարարտանյութերի ու թունաքիմիկատների պահպանվածությունը (էկոլոգիական անվտանգությունը) և այլն: Ցանքատարածությունների համակենտրոնացման համար անհրաժեշտ է նաև ժամանակակից պահեստարանների կառուցում: Այդ դեպքում կարտոֆիլի ցանքատարածությունների համակենտրոնացումը պետք է իրականացնել բարենպաստ ագրոկլիմայական պայմաններ և աշխատուժի համեմատաբար լավ ապահովվածություն ունեցող տարածաշրջաններում՝ արդյունավետ տեղաբաշխման և մասնագիտացման խորացման հիման վրա:

Աղյուսակ 8

Շիրակի մարզի գյուղացիական տնտեսությունների խմբավորումն ըստ արտադրության միջոցներով ապահովվածության աստիճանի (միջին ցուցանիշները 2006-2010 թթ. ընթացքում)⁹

Ցուցանիշներ	Ֆոնդաապահովվածությունը 1 հա վարելահողի հաշվով, հազար դրամով							
	Մինչև 400	410-500	510-600	610-700	710-800	810-900	910-1000	1000-ից բարձր
Խմբում գյուղացիական տնտեսությունների քանակը	36	32	38	28	72	37	28	54
1 գյուղացիական տնտեսության ցանքատարածության միջին չափը, հա	0.23	0.25	0.28	0.26	0.25	0.64	0.28	0.67
Բերքատվությունը, ց/հա	217.5	236.4	230.9	242.6	243.5	250.0	236.3	260.0
Միջոցների ծախսերը, հազ.դրամ / հա	15.9	17.6	16.1	16.9	17.3	17.6	17.7	18.4
1ց ինքնարժեքը, հազ. դրամով	7.7-40.7	7.4-17.4	6.4-57.4	5.4-88.4	6.4-9.4	5.4-62.4	7.4-35.4	5.4-21.4
Աշխատանքային ծախսերը, մարդ-ժ/ հա	341	352	312	312	311	322	317	310
1ց աշխատատարությունը, մարդ-ժ	3.5	3.1	2.8	2.6	2.5	2.5	2.7	2.2
Արտադրանքի իրացումը, ց/հա	176.3	188.3	184.3	195.3	194.3	198.3	188.3	198.3
Իրացման գինը, հազ. դրամ/ց	20-92	22-30	21-105	22-45	22-103	23-13	23-51	23-52
Շահութաբերության մակարդակը, %	48.7	48.6	66.1	-27.1	86.5	-46.9	72.9	83.8

⁹ Աղյուսակը կազմել ենք Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության բաժնի տվյալների հիման վրա:

Կարտոֆիլագործության մեջ տնկարկների մակերեսների համակենտրոնացման հետ մեկտեղ ենթաճյուղի զարգացման համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև կարտոֆիլի արտադրության ինտենսիվացումը: Ինչպես վկայում է կարտոֆիլ արտադրող գյուղացիական տնտեսությունների աշխատանքային փորձը, կարտոֆիլի արտադրության վերջնական արդյունքները՝ բերքատվությունը և տնտեսական արդյունավետությունը, մեծապես որոշվում են ինտենսիվացման մակարդակով:

Այսպես, արտադրության հիմնական միջոցներով ապահովվածության բարձրացմանը զուգահեռ օրինաչափորեն աճում է կարտոֆիլի բերքատվությունը, կրճատվում են միավոր արտադրանքի արտադրության ինքնարժեքը, ինչպես նաև աշխատանքային ծախսերը (տե՛ս աղ. 8):

Աղյուսակ 8-ի տվյալները միաժամանակ վկայում են այն մասին, որ հաշվի է առնված նաև ինտենսիվացման արդյունավետ մակարդակի սահմանը, մասնավորապես ֆոնդաապահովվածության ավելացումը: Ինչպես հայտնի է, կարտոֆիլագործության և ագրարային հատվածի մյուս ենթաճյուղերում ինտենսիվացման հնարավորությունները որոշվում են ինովացիոն զարգացման մակարդակով, նրանց տեխնոլոգիական ապահովվածության աստիճանով:

Եթե վերցնենք միավոր հողատարածքի հաշվով արտադրության ծախքերում արտահայտվող ինտենսիվացման բոլոր գործոնները (կենդանի աշխատանքը, աշխատանքի առարկաները և գործիքները), ապա կարտոֆիլագործության մեջ ակնհայտորեն երևում է հետևողական ինտենսիվացման արդյունավետության բարձրացման հստակ օրինաչափություն (տե՛ս աղ. 9):

Աղյուսակ 9

Գեղարքունիքի մարզի ճամբարակի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում կարտոֆիլագործության տնտեսական ցուցանիշների կախվածությունը արտադրության ինտենսիվացման մակարդակից (միջինը 2006-2010 թթ. ընթացքում)¹⁰

Ցուցանիշները	Արտադրության միջոցների ծախսերը, հազ. դրամ/հա						
	մինչև 100.0	101.1-120.0	121.1-140.0	141.0-160.0	161.0-180.0	181.0-200.0	200-ից ավելի
Խմբում տնտեսությունների քանակը	12	16	36	56	71	61	81
Ցանքատարածությունները, հա	1.98	2.94	2.93	2.87	2.86	2.76	2.15
Բերքատվությունը, ց/հա	160.0	167.5	177.8	194.8	206.8	234.3	240.8
Արտադրամիջոցների ծախսերը, հազ. դրամ / հա	91.0	114.3	130.8	150.4	167.6	189.6	228.0
Աշխատանքային ծախսերը, մարդ-ժ/ հա	209	270	284	289	300	340	388
1ց-ի աշխատատարությունը, մարդ-ժ	2.9	3.2	3.1	2.7	2.5	2.3	2.3
Ինքնարժեքը, հազ. դրամ/ց	7.0-33.0	8.0-64.0	9.0-57.0	8.0-91.0	9.0-100.0	7.0-83.0	9.0-79.0
Արտադրանքի իրացումը, ց/հա	121.1	129.1	133.1	148.1	156.1	168.1	184.1
Իրացման գինը, հազ. դրամ/ց	22.0-41	23.0-24.0	23.0-66.0	24.0-86.0	25.0-102	27-103	27-120
Շահութաբերության մակարդակը, %	-32.5	-34.7	25.8	21.2	16.5	44.4	67.0

¹⁰ Աղյուսակը կազմել ենք Գեղարքունիքի մարզային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

Այսպես, միավոր ցանքատարածության հաշվով նյութադրամական բոլոր միջոցների կիրառման աճի հետ մեկտեղ ավելանում է բերքատվությունը, և կրճատվում են միավոր արտադրանքի հաշվով կատարվող աշխատանքային ծախսերը:

Կարտոֆիլագործության գծով առաջատարներից մեկում՝ Գեղարքունիքի մարզում, հետևողականորեն իրականացվում են կարտոֆիլի արտադրության գոտիական, միջտնտեսական ու ներտնտեսական մասնագիտացման խորացում և համակենտրոնացում:

Ցանքատարածությունների համեմատաբար մեծ կենտրոնացմամբ գյուղացիական տնտեսություններում (3.0 հա-ից ավելի) ձեռք են բերվել կարտոֆիլագործության գծով առավել բարձր տնտեսական ցուցանիշներ՝ մինչև 1հա ցանքատարածություններ ունեցող տնտեսությունների 1գ-ի ինքնարժեքը միջինի համեմատությամբ ցածր է 1033,3 դրամով, աշխատածախսերը՝ 4.0 մարդ-ժամով, իսկ շահութաբերության մակարդակը բարձր է 20,6% -ով (տե՛ս աղ. 9): Ուստի մարզում մեծ ուշադրություն է դարձվում միջտնտեսական մասնագիտացմանը և տնտեսություններում կարտոֆիլի ցանքատարածությունների համակենտրոնացման բարձրացմանը:

Նեղ մասնագիտացված տնտեսությունների և խոշորացված արտադրական միավորների կազմակերպումը թույլ է տալիս լայնորեն կիրառել հիմնական տեխնոլոգիական գործողությունների կատարման հոսընթաց եղանակներ, խուսափել մեկ հողամասից մյուսը տեխնիկայի անարտադրողական տեղափոխություններից և ժամանակին կատարել բոլոր աշխատանքները: Աշխատանքների կազմակերպման հոսընթաց մեթոդի կիրառումը թույլ է տալիս զգալիորեն կրճատել կատարման ժամկետները, իջեցնել աշխատանքի ծախսերը և բարձրացնել բերքատվությունը: Այսպես, օրինակ, Սևանի տարածաշրջանի Լճաշեն և Վարսեր գյուղական համայնքներում մինչև արտադրական միավորների խոշորացումը, հողերի նախապատրաստումով և կարտոֆիլ տնկելով զբաղված էին 3 - 4 տրակտոր ու ավտոմեքենա և մոտ 50-60 աշխատող: Այժմ, շնորհիվ ցանքատարածությունների համակենտրոնացման և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման՝ տրակտորների և ավտոմեքենաների պահանջարկը կրճատվել է և հասել մինչև 1.5-2.0 միավորի, իսկ աշխատողների քանակը՝ մինչև 35-40-ի:

Տնտեսական հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ մասնագիտացված տնտեսություններում մինչև նվազագույն ռացիոնալ չափերը (3.0 հա և ավելի) կարտոֆիլի ցանքատարածությունների համակենտրոնացումը և արտադրության ինտենսիվացումը մասնագիտացված տնտեսություններում գոյություն ունեցող լավագույն մակարդակին հասցնելը հնարավորություն են տալիս արտադրության ծախսերի կրճատման դեպքում ստանալու լրացուցիչ 150-200 հազ. տոննա ապրանքային կարտոֆիլ:

ВОЛОДЯ МАНАСЯН – Специализация и концентрация картофелеводства в РА в контексте повышения экономической эффективности подотрасли. – С ростом концентрации и особенно с повышением специализации крестьянских хозяйств при выращивании товарного картофеля значительно улучшаются производственные, экономические и экологические показатели подотрасли: рас-

тёт урожайность и уровень товарности, снижается трудоёмкость и себестоимость картофеля, повышается рентабельность его производства.

Кроме того, анализ производства картофеля в крестьянских хозяйствах Армении свидетельствует о том, что углубление специализации картофелеводства даёт эффект в молочном скотоводстве, овощеводческом и садоводческом производствах.

VOLODYA MANASYAN – *Specialization and Concentration of Potato-Culture in RA in the Context of Improving Economic Efficiency of the Subindustry.* – With the increase of concentration and especially with the increase of level of farm specialization on the commercial potato production substantially rally the productive, economic and ecological indexes of the sub-industry: the yield increases, the work content and cost value develop, the level of its production efficiency increases, the level of marketability grows.

Furthermore, the analysis of efficiency of potato farms in RA testifies that increased specialization of potato-culture is effective in dairy farming, stock-raising business and horticulture manufacturing.